# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 20-ին, կիրակի, «Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը, քարոզեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը՝ «Ի վերայ Աջոյն և Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան» բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց հայրապետական մաղթանք։

**
*

Հունիսի 27-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը։

**
*

Հուլիսի 4-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը։

**
*

Հուլիսի 6-ին, երեքշաբթի, Մայր Աթոռ վերադարձան գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը և հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը, որոնք ավելի քան մեկ ամիս ուղեկցում էին Վեհափառ Հայրապետին, Նրա Ռումինիա և Բուլղարիա հովվապետական այցելության ընթացքին։

**
*

Հուլիսի 8-ին, հինգշաբթի, «Տօն սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ»։

Հանդիսավոր սուրբ պատարագի արարողությունը կատարվեց Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում։ Պատարագեց և քարոզեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոս Տերյանը։

Սուրբ պատարագի արարողությունից հետո, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն Վահան Ամատունի իշխանի շիրմի վրա։

**
*

Հուլիսի 11-ին, կիրակի, «Տօն գիւտի տփոյ Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

**
*

Հուլիսի 18-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը, քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը՝ «Լաւ է մի պատառ համով խաղաղութեամբ, քան զտուն լի զենլեօք և բարեօք թշնամութեամբ» բնաբանով։

**
*

Հուլիսի 25-ին, կիրակի, «Վարդավառ, պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը։

**
*

Հուլիսի 26-ին, երկուշաբթի, «Յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

**
*

Հուլիսի 31-ին, շաբաթ, Վեհափառ Հայրապետը մեկ ամսվա արձակուրդով մեկնեց Կիսլովոդսկ, «Կրասնի կամեն» առողջարանը։ Վեհափառ Հայրապետին ընկերակցում է հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը։

**
*

Օգոստոսի 1-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։*

**
*

Օգոստոսի 8-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը, բնաբան ունենալով «Այսօր տօնեմք զյիշատակ սուրբ հայրապետացն, որք լուսաւորեցին զհաւատոյ մանկունսն»։*

**
*

Օգոստոսի 18-ին, կիրակի, *«Վերափոխումն Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը։*

*Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց «Կարգ խաղող օրհնելոյ»։*

**
*

Օգոստոսի 16-ին, երկուշաբթի, *«Յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։*

**
*

Օգոստոսի 22-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։*

**
*

Օգոստոսի 27-ին, ուրբաթ, *Կիսլովոդսկում մեկ ամիս հանգստանալուց հետո, Մայր Աթոռ վերադարձավ Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանի։*

**
*

Օգոստոսի 29-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։*

*Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

**
*

Օգոստոսի 30-ին, երկուշաբթի, *Վեհափառ Հայրապետին այցելեցին ֆրանսահայ մի խումբ տուրիստներ։*

**
*

Սեպտեմբերի 2-ին, հինգշաբթի, *Վեհափառ Հայրապետը Վեհարանում բարեհաճեց ընդունել Մայր Հայրենիքում գտնվող սփյուռքահայ ուսուցիչների խումբը։*

**
*

Սեպտեմբերի 4-ին, շաբաթ, *երկու տարի Միրֆիլդի (Անգլիա) աստվածաբանական կոլեջում իր ուսումը կատարելագործելուց հետո, Ս. Էջմիածին վերադարձավ Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պոզապալյանը։*

*Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պոզապալյանը ստանձնեց Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի տեսչի պաշտոնը։*

**
*

Սեպտեմբերի 5-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։*

*Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*